## ՎԱՐԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

| | |
|---|---|
| Վարկատեսակի անվանումը | <<ԳՐԱՎՈՎ-ՍՏԱՆԴԱՐՏ>> (անշարժ գույքով և ֆինանսական հոսքերով ապահովված) |
| Վարկի նպատակը | սպառողական |
| Պայմանները սահմանող մարմինը, որոշումը | <<ԲԼԵՍՍ>> ՈՒՎԿ ՍՊԸ Խորհրդի <<11>><<դեկտեմբերի>>2023թ-ի թիվ 17 որոշում |
| Պայմանների գործողության ժամկետը | Սկսած <<18>><<դեկտեմբերի>>2023թ-ից |
| Վարկի ձևակերպման վայրը | <<ԲԼԵՍՍ>> ՈՒՎԿ ՍՊԸ գլխամասային գրասենյակ, մասնաճյուղեր |
| Վարկի արժույթը | ՀՀ դրամ |
| Վարկի տրամադրման ձևը | Անկանխիկ (միանվագ, փուլային, վերականգնվող կամ չվերականգնվող վարկային գիծ) |
| Վարկի նվազագույն գումարը | 1.000.000 ՀՀ դրամ |
| Վարկի առավելագույն գումարը | 35.000.000 ՀՀ դրամ |
| Վարկի առավելագույն ժամկետը | 10 տարի - 12.000.000 ՀՀ դրամ գումարը գերազանցող վարկերի համար<br>8 տարի - մինչև 12.000.000 ՀՀ դրամ գումարով վարկերի համար |

**Վարկի տարեկան անվանական, փաստացի տոկոսադրույքները և ծառայության միանվագ վճարը**

| Վարկի գումար /ՀՀ դրամ/ | Տարեկան նվազագույն անվանական տոկոսադրույք | Վարկի տրամադրման ծառայության մեկանգամյա վճար /% տրվող վարկի գումարից/ | Տարեկան փաստացի տոկոսադրույք |
|---|---|---|---|
| 12.000.001 - 35.000.000 | 16,7 | 0.7 | 18,30 |
| 1.000.000 - 12.000.000 | 16,9 | 0.8 | 18,99 |

| | |
|---|---|
| Վարկի և տոկոսագումարների վճարման եղանակը | Վարկի մարման եղանակ – ամենամսյա (հավասարաչափ կամ ոչ հավասարաչափ)<br>Տոկոսագումարների վճարման եղանակ – ամենամսյա<br>Վարկային գծի մարման եղանակ – ժամկետի վերջում միանվագ |
| Վարկի մարման դադարի շրջանը | կարող է սահմանվել վարկի մայր գումարի դադարի շրջան, ոչ ավել, քան տրամադրվող վարկի ընդհանուր ժամկետի 1/5-ը |
| Տոկոսագումարների հաշվարկման կարգը | Տոկոսագումարը հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ՝ օրական կտրվածքով, տարվա օրացուցային օրերի քանակով |
| Անվանական տոկոսադրույքի փոփոխությունը | Վարկի անվանական տոկոսադրույքը պայմանագրի գործողության ընթացքում մնում է անփոփոխ |
| Ժամկետանց վարկի տոկոսադրույքը | տարեկան 24% |
| Ժամկետանց տոկոսագումարի տույժը | օրական 0,13% |
| Պարտքի գանձման հերթականությունը | Տույժեր, տոկոսագումարներ, վարկի մայր գումար |
| Վարկի վաղաժամկետ մարումը | Վարկի վաղաժամկետ մարումը թույլատրվում է, տույժեր և տուգանքներ չեն սահմանվում: *Վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում են վարկառուի վարկավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող Ընկերության եկամուտը ձևավորող վճարները (սպառողական կրեդիտների դեպքում):* |

## ՎԱՐԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

| | |
|---|---|
| Վարկի ապահովման միջոցները | Գրավ՝ անշարժ գույք /անշարժ գույքի գնման, կառուցման իրավունք/, որն Ընկերության համար ունի բավարար լիկվիդայնության /իրացվելիության/ աստիճան.<br>- Գլխամասային գրասենյակի համար՝ ՀՀ տարածքում գտնվող անշարժ գույք,<br>- մասնաճյուղերի համար՝ Երևանում, երևանամերձ տարածքներում և վարկ տրամադրող մասնաճյուղի տեղակայման տարածաշրջանում գտնվող շենք-շինություններ, հողամասեր |
| Վարկի գումար/գրավի գրավադրման արժեք առավելագույն | 70% |

| | |
|---|---|
| հարաբերակցությունը | |
| Գրավադրման հետ կապված ծախսերը | Գրավ դրվող գույքը ենթակա է գնահատման, իսկ գրավի պայմանագիրը՝ նոտարական վավերացման և պետական գրանցման: Գրավադրման հետ կապված անհրաժեշտ բոլոր ծախսերը՝ գույքի գնահատման, նոտարական վավերացման և պետական գրանցման, կատարվում են հաճախորդի կողմից: |

## ՊԱՀԱՆՋՆԵՐ

| | |
|---|---|
| Հաճախորդի տարիքային սահմանափակումները | Վարկառուի նվազագույն տարիք - 18 տարեկան<br>Վարկառուի, Գրավատուի առավելագույն տարիք /վարկի մարման վերջնաժամկետի դրությամբ/ - 68 տարեկան |
| Երաշխավորի պահանջը | Վարկային հայտի առանձնահատկություններից ելնելով, որոշ դեպքերում կարող են պահանջվել երաշխավորներ |
| Ապահովագրության պահանջը | Չի պահանջվում |